Աննա Դավթյան

Ցրիվ

Մի ձայն մթության մեջ: Չէր թեքվելու անգամ՝ նայելու դրա ուղղությամբ: Ձայներ՝ խուլ դնգոցներ: Այնքան որ անլրելի էր աշխարհը: Ընդարձակվող բազում փեշերից: Մարմրող լույսեր հեռուներում: Ամեն մեկից փոքրիկ մի հետք: Ոչինչ՝ բացի դրանց կուտ-կուտ կումները՝ ցած սահող խավարի լարերից: Չհետեւել: Պարզապես պառկել մթության մեջ ու կրկնել, քնելու համար կրկնել՝ թող ոչ բոլորը ինձ սիրեն: Գլխից հեռացնել տպավորությունները որոճալու սովորությունը: Տպավորությունների սուտլիկ որսկան: Այնքան տարիներ հետո հասկացավ ու ուզեց սովորել քնել:

Երազում այլեւս չէր տեսնում նրան: Նա, ով մահվան մեջ մտավ: Քանի որ այլ փորձառության տեղ չէր մնացել: Մնացել էր միայն լքել մորը:
Հիմա նրա սպիտակ շապիկի տակ այլեւս չկա այն մարմինը, որը կլանում ու անդրադարձնում էր արեւից եկող ստվերը: Մեռած է ու դասված: Առանց որոշակի հատկանիշների:
Նրա սպիտակ շապիկը դրված է բազմոցի գլխին, սենյակում:
Մայրը հույս ունի պահպանել հոտը:
Ապակու տակ դրված է նրա գրպանի վառված նոթատետրը: Չի պարունակում անօդաչու սարքերի մասին հիշատակումներ: Երազանքներ են: Ինչպիսին ունենում են երիտասարդները: Շատ երիտասարդները: Երիտասարդները պետք է տեսիլքներ տեսնեն: Ասում է Հին Կտակարանը կամ ինչ-որ աղանդ:
Մանանեխի չափ երիտասարդները:

Մոռանում եմ, բայց երբ հիշում եմ, ապուշ եմ կտրում:

Երկու փոքրիկ լույս՝ այն երկուսը: Իրար փարված տղաներ: Ջուր են խմում իրար բերանից: Երկրորդը բոլորովին գինի չի խմում, միայն կակաո ու ընկերոջ ծլուլ-քրտինքները: Ձեռքը տանում է նրա մեջքի վրայով, փայփայում է կողերը: Սրբում է թիակների ջուրը: Ակնկալում է հիացմունք: Լուծում է մոր վրեժը իրպեսից: Վարժեցրել է նրան, ընտանի են: Մայրը թաղված է հեռու մի գերեզմանոցում:
Սրանց էդ հեռու դաշտերից վերջին ճարով ետ բերեց: Աղոթեց ու աղոթեց առանց աստծո: Կապկտուր ընկած, դիմելով ում պատահի: Սաստիկ էր կարիքը, ինչ խոսք: Նայում էր դաշտերի երախներին: Որտեղ փշերի վրա մնացել էին կախված վերջին կյանքերը: Աշնան ամեն մի ծաղիկ՝ արնակալ մռութը սրբող քոռ:
Մարմնամասեր՝ մակաղած դաշտի երեսին ու փոսերի մեջ: Ցփնված ու չհամարակալված: Ում անունը՝ ում գրպանի մեջ, նաեւ ձեռքը: Հետո ծածա՛ն-ծածան եռագույն դրոշներ: Նրանց հոգիները ծվարած բլրի ծառերի քամիների մեջ:

Ինչպե՞ս գրկել այս երկրի ձյունները:
Ինչպե՞ս ժողովել՝ հարցնում է ժողովողը:

Երբ դուք այնտեղ էիք, ես դողում էի: Բոլոր 44 օրերին անկողինս գցված մնաց հյուրասենյակի բազմոցին: Որից ցած էր սահում սեպտեմբերի, հոկտեմբերի ու նոյեմբերի վերմակը: Հետո ցնծություն, երբ մենք պարտվեցինք, քանի որ դողում էի:

Հետո ուշի-ուշադիր նայել, սովորել ով եք:

Ներել ձեր փոքրիկ թերությունները: Դրանք սկսել են մեծանալ իմ աչքում՝ պատերազմի հեռանալու հետ: Իմ հատուցման մի մասն էլ ներելն էր: Ուրիշ բան չկար անելու, բայց դե, գիտեք, ինչքա՞ն:

Հիանալ, որ մի դռան շուն եք: Որ գաղտնիքն ի՞նչ է, որ ձեր միջեւ չկա: Տեսնել մեկիդ մարմնի անարգումը մյուսիդ աչքերում: Տեսնել, որ սարսափել եք իրար դիակ տեսնել: Նաեւ երբ ասել են՝ գնացեք, դիակները հավաքեք, կատաղի քրֆել եք: Չեք գնացել: Ոչ մեռել եք, ոչ էլ դիակ եք հավաքել: Համարյա հաղթած եք:

Կերեք իրար: Ջահել ատամների կափկափոցը դիմացինի ջահել դնչի վրա: Ո՞վ է ձեր այսքան երիտասարդությունն հոգալու: Ո՞վ է հոգալու ձեր սերը: Ձեր հույսն ինձ վրա: Փհա՛յ…

Գլխի վերեւում կախված է լուսավոր ջահի մոլեկուլը, որ ստվերներ ու կնճիռներ է գցել:

Հետո՞ ինչ, որ անկուշտ ենք:

Փախեք:

Ու իբր… բռնվեցի՞ր, սիրտիկս: Սա արդեն էլ ավելի ուրիշի մասին է, որ նշան բռնելու համար ինձ ասել էր sugar mama: Ու դա ձանձրալի է, ոչ թե ուրիշ բան: Նա սիրում է այն աղջկան՝ գեղեցիկ կրծքերով, որոնց ճարպի մեջ հին ուտելիք է: Նրանք ձեւ արեցին ու չպարեցին իրար հետ: Ձեւ արեցին ու պարեցին ինձ հետ: Բայց նրանք իրար հետ էին, ինձ հետ չէին: Բնավ:

Իսկ էկրանին մլմլում է սիրուն կոկորդ ունեցողը: Ես նայում եմ: Որտե՞ղ կդրվեր դանակը: Դանակը կնոջից շուտ է հասնում տղայի վզին: Այդպիսին է երկիրը: Պարանոցով սրում են դանակների շեղբերն, ու կուրծքը ստուգում է գնդակի սրությունը: Կնոջը ի՞նչ է մնում անել: Ողբալ ու ինքդ բերել էն մեկին, որին կսիրես: Ուրիշ ի՞նչ: Ինչպե՞ս պոկել դրանց, բերել-հասցնել գիրկը: Քանի որ այնքան տարված են իրենց ջահել գործով՝ մեռնելով:

Ու հին ապրողից փոխ առած հանգով՝ օ՛, անմխիթար հույս ու ջերմություն պաղած: Օ, վշտի ծավալուն վրաններ: Սպիտակ քողարկիչ կտորներ սպիտակ ձյան վրա: Այնպես որ վերեւից համարյա չես տարբերակի՝ մեռա՞ծ է, թե՞ պարել է ձեւացնում:

Ու հարցնելով հին մեռելներին՝ վե՞րջ, թե՞ էլի կմագլցի, կճոճվի լարին: Իբր թե ապրել գիտի: Իբր թե խելքը գնում է խելքահան անելու համար: Մահից հետո դարձնելու: Իբր թե աչքատակերն արդեն մանուշակագույն չեն դառել: Մտածելով՝ գեղեցիկ գույն է: Փոքրությանը նկարած զանգակների գույնը: Ու մանուշակագույնի հոտը, որ տարբեր էր: Թքած մանուշակների վրա:

Լալ, անելիք չունեցողի պես լալ: Անհրաժվանք, անմոլի, անաղ:

Իմացել եմ, որ թափել են կանանց ամբողջ գնդի աղիքները:

Դրանք հնարավոր չէ թաքցնել:

Ոչ մի փորի տակ:

Ճարպի տղան ինձ ասաց.
– Որ ֆլիրտ անեմ, չես դիմանա:
– Կդիմանամ: Ես դիմանում եմ մահվան գայթակղությանը,- չասացի: Ասացի՝ լավ:

Սեղանի վրա դրեց գեղեցիկ, մազոտ թեւերն ու կարմրեց սիրածի գալուց: Աչքերի գույնը շաղ եկավ, կտրվեց խոսակցության թելը: Չհավատաց, որ երկար չեն սիրում: Նայում էր դիմացը, բայց տեսնում էր հետեւը, որտեղ աղջիկն էր, թվում էր՝ մի ամբողջ կյանք կա սիրելու: Զանի՛կ:

Հեռախոսը դրված սպասում էր ծնգոցի:

Ես ոչինչ անել չէի կարող:

Նայել մութ պատուհանից դուրս, որ ներսն է ցույց տալիս, ու տեսնել տղայի խոչակը: Մտքում դնել դանակը վզին ու տառապել, ահավոր տառապել ցավից: Մինչ նրա գլխում սուրում են ապագայի սարքերը՝ ինչպես օձի լեզուներ: Նա կարծում է՝ ապագան կա եւ իրենն է: Նա կարծում է՝ սերը կա եւ իրենն է: Նա կարծում է՝ ես կամ, եւ երբ ուզի՝ իրենը: Ես կարծում եմ՝ ամեն ինչ բաժանված է ու նվիրված:

Ցոլացում, ցոլք, ցոլացում, ցաք:
Որսացանցը՝ լղպոր քարերին: Ոչ թե կակուղ թառանչուն նեռններ՝ խոտոր խոստումներով, այլ հին ձեթով ճրագներ՝ անշրպետն ի վար: Մարդու խոսելն իսկ չի գալիս: Ուր մնաց՝ անդունդով ցած վազելը:

Եւ, ուրեմն, ո՞վ է մնում: Նրանցից ո՞վ է մնում:

Ես դեռ մնո՞ւմ եմ:

Ցաքուցրիվ, անկար ու ներկայի մեջ ճապաղված:

Ներանցի՞ց ով է մնում:

Ապավինելու իմ արգասավորությանն ու ամլությանը:

Մարմրող լույսեր հեռուներում:

Ո՞վ է կարող ցանկության վրա ցանկություն գլխել:

Ո՞վ է կարող հեռու հրել խավարի սայլը:

Ո՞վ է կարող ճրագը կախել ապագայի վզից:

Ո՞վ է կարող մրցել՝ որ մեկս է սպանելու:

Մոնչալ անորոշ անցյալի վրա:

Սեղանին դրված է մեղվի չափ թանաքամանը:

Ո՞վ է կարող ետ պատմել: